Խմբագիր՝ Սուսան վարդանյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

«Եռագույն խոհեր» գիրքը հեղինակի երրորդ գիրքն է «Խառնաշփոթ գույներ ժողովածուից և «Առաջին օրը գյուղում» երգիծական ժանրով գրված վիպակից հետո: Գրքում զետեղված հեղինակի հայրենասիրական ոգով գրված բանաստեղծություններն արտահայտում են նաև նրա վերաբերմունքը ներկա իրողությունների վերաբերյալ: Այս իմաստով գիրքը շատ արդիական է և կարևոր: Գրքում տեղ է գտել նաև «Արդարադատության շեմին» պատմվածքը, որը ներկայացնում է հեղինակի մտահոգությունները մարդկության ապագայի հետ կապված:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծություններ

ԱՅԲՈՒԲԵՆ ……5

ՄՈԳԱԿԱՆ ԽՈՍՔԸ …… 9

ՆԵՐՈՒՄ ՉԿԱ …… 13

ՀԻՄԱ Է՞Լ ԼՈՒՌ ԵՍ ……16

ՆԵՂԱՆՈՒՄ ԵՆՔ ……19

ՈՒՇԱՑԱԾ ԿՏԱԿ …… 22

ՄԱՅՐԻԿԻՍ…… 27

ՔՈ ԽԻՂՃԸ…… 30

ԴՐԱԽՏԻ ՃԱՄՓԱՆ …… 33

ՄԻԱԿ ԼԵԶՈՒՆ …… 35

Պատմվածք

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՄԻՆ …… 38

ԵՌԱԳՈՒՅՆ
ԽՈՒՐԵՐ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՅԲՈՒԲԵՆ

Ա Ամպերն անցան արդ, արթնացի՛ր, արև՛,

Բ Բարի լուրով բեր աշխարհին բարև:

Գ Գալիք գարունքի գույներով գերված,

Դ Դրոշները մեր դաշտերում դրված

Ե Երգն են եռագույն երջանիկ երգում,

Զ Զորեղ ու զվարթ ձայնով զրնգում:

Է Է՛հ, էականը էս հողն է էսպես՝

Ը Ընծա ընձեռված ընդերքով պես-պես:

Թ Թանկ է մեր հողը, աստված է վկա,

Ժ Ժողովու՛րդ, դրախտն հենց է՛ս է, որ կա:

Ի Ինչ արած սակայն, մեր թույլտվությամբ,

Լ Լռությամբ ու մեր անտարբերությամբ,

Խ Խաղաղ խոսքերով խաբելով ազգին

Ծ Ծաղրն ու ծանակն է հագել ծիրանին:

Կ Կապրենք, կկերտենք, չէ՞ որ հայ ենք մենք,

Հ Հո՛ղը հայրենի, հոգ չէ, կպահե՛նք:

Ձ Ձեռքը չնայած ձեռք է լվանում՝

Ղ Ղեկ բռնած ձեռքը մեզ ձեռք է առնում:

Ճ Ճշտով խաբում է, խաբածը՝ ճշտում,

Մ Մտքով կույր մարդիկ նրան են պաշտում,

Յ Յոթ գլխով դևից պիտ ապրենք ազատ,

Ն Նա է յոթ տիրոջ ծառան հարազատ:

Շ Շողա՛, դու արև՛, հոգիս ներխուժի,

Ո Ոտքի պիտ կանգնենք շուտով վրեժի,

Չ Չարն է ուռճացել աշխարհի ցավից,

Պ Պիտ ազատվենք իր մոլագար դավից,

Ջ Ջահել ջիվաններ կորչում են անհետ,

Ռ Ռմբակոծվում է սերը նրանց հետ:

Ս Սակայն բավ է արդ, շեփորնե՛ր, հնչե՛ք,

Վ Վրեժով լցված «լառնե՛ր», զարթնե՛ք,

Տ Տեր լինենք հողին ու տերը մեր տան

Ր Րոպե առ րոպե ու ամեն վայրկյան:

Ց Ցեղասպան ազգին ցնցենք՝ ուշքի գա

:

Ու Ու ունեցվածքին ուրիշի չանսա:

Փ Փարոսներ վառենք ամենքի համար,

Ք Քարից կառուցենք սիրո մեծ կամար,

Եվ Եվ թո՛ղ իմանան, ինչ Է՛լ պատահի,

Օ Օրվա արևն իսկ, եթե խավարի,

Ֆ **Ֆոսֆորի լույսն են հայերն աշխարհի:**

ՄՈԳԱԿԱՆ ԽՈՍՔԸ

Բառակույտերի անձրև է մաղվում,
Գուցե երկնքից կամ տիեզերքից,
Բանաստեղծն էլ այդ բառերից կախվում
Բարբաջում է իր հոգու խոր վերքից:

Ահա այս մեկում՝ այս բառակույտում
Սիրո կրակից այրվող պատանին
Արցունքն աչքերին սերն է իր ատում,
Մատից հանում է, գցում մատանին:

Այն մեկն է՛լ, տեսե՛ք, ձոնված է մորը,
Դեռ հիշում է նա իր մոր օրորը:
Ինչ-որ մեկին էլ ընկերն է դավել՝

Էլ ի՞նչ կա արդյոք դրանից ավել:
Ահա սպիտակ ձին սիրո ասպետով
Եկել ու կանգնել սրտին աղջկա,
Ձախջախում է սիրտն ասպետն իր նետով,
Ո՞ւր կորավ սերը, սերն արդեն չկա:

Ա՛խ, երանի թե բանաստեղծ լինեմ,
Այդ մուսաներով ողջ հոգիս զինեմ
ԵՎ այդ անձրևից տիեզերական
Բառը ես գտնեմ՝ բառը մոգական:

Կձոնեմ ես այն մեր հայ զինվորին,
Որ ցնծա ուժգին իր հերոս ոգին

Ու սավառնի վեր թևերով արծվի՝
Թշնամու հոգում սարսափ տարածվի:

Կձոնեմ երգեր իմ հայրենիքին,
Կամավոր կռվող առյուծ տղերքին,
Որ ամեն վայրկյան հոգեպես զգաստ,
Հանուն մեր հողի մարտի են պատրաստ:

Իսկ թե մոգական բառն այդ ճիշտ հնչի՝
Ամբողջ աշխարհի հայերին կանչի,
Ես ձոն կհյուսեմ, ձոն հաղթանակի,
Նաև փառապանծ հայոց բանակի:

«Թող խաղաղ լինեն հայերն աշխարհի»,-

Այդ երազանքից աչքերս են շաղվում,

Ո՞ւր է բառը այն, ինչո՞ւ չեմ գտնում:

Բառակույտերի անձրև է մաղվում...

ՆԵՐՈՒՄ ՉԿԱ

Վախը պատել մեր աշխարհին
Թագավոր է կարգվել գահին,
Վախեցնում է նույնիսկ մահին՝
Իբր աշխարհի վերջին պահին,
Թե կյանք չկա՝ մահ էլ չկա:

Վախը դարձել մեծ առաջնորդ
Սուտ է ծնում՝ չկա ներում,
Սատանան էլ որպես միջնորդ
Տարածում է հոգիներում,
Ազնիվ մարդուն լսող չկա:

Վախից մարդը մարդ է սպանում
Կամ իր ազգին դավաճանում:

Քենախնդիր ու նենգ այնքան
Այդ վախկոտից շատ անզգամ,
Աստված վկա, պրծում չկա:

Ամենաքաջ մարդուն անգամ
Վախեցնում է իր ապագան:
Նա լավ գիտի, ոնց էլ ջանա,
Մեկ է՝ մի օր կվերջանա
Ու այս կյանքից լավը չկա:

Սակայն այստեղ, այս աշխարհում
Կա ժողովուրդ՝ հայ են ասում,
Մեղքերից միշտ ապաշխարում
Չունի ոչ վախ, ոչ էլ ցասում,

Եվ պարտություն հոգում չկա:

Է՛յ, դարավոր հա՛յ ժողովուրդ,

Ուզում եմ ձեզ տալ մի խորհուրդ,

Դուք վախեցե՛ք մարդուց վախկոտ,

Մի՛ հանդուրժեք ձեզ առաջնորդ,

Թե չէ՝ ձեզ էլ ներո՛ւմ չկա:

ՀԻՄԱ Է՞Լ ԼՈՒՌ ԵՍ

Այ դու՛, հանցագործ հայի մի տեսակ,
Որ քո լռությամբ մեր երկրի ղեկին
Թողեցիր կանգնի մի ստոր ավազակ
Ու տարավ, կորցրեց նա մեր տղերքին:
Հիմա է՞լ լուռ ես:

Ախ դու չարագո՛րծ ու աղետաբեր,
Հենց քո՛ լռությամբ առյուծները մեր
Ջահել ու ջիվան լռեցին ընդմիշտ
Թողնելով կսկիծ ամենուր ու վիշտ:
Հիմա է՞լ լուռ ես:

Տեսա՞ր, դրոշներն ահեղ բարկությամբ
Կռիվ տվեցին հողմի հետ վայրագ,

Բայց ավա՛ղ, քո այդ անտարբերությամբ
Եռաբլուրում բազմացան արագ:
Հիմա է՞լ լուռ ես:

Լեռները նույնպես սուս են եղել միշտ,
Բայց էլ չեն լռում, ժայթքում են ներսից:
Նայի՛ր, սովորի՛ր՝ պայքարում են ճիշտ,
Որ ջնջվի չարքը երկրի երեսից:
Հիմա է՞լ լուռ ես:

Բավ է դու արդեն ինքդ քեզ խաբես,
Քո տեսակին դու, հենց դո՛ւ պիտ փոխես

Ու բոլորի պես պիտի մաքառես,

Հակառակ դեպքում՝ հավետ կլռես:

ՆԵՂԱՆՈՒՄ ԵՆՔ

Նեղանում ենք ազգով բոլոր՝
Բարեկամը մեր դարավոր
Լքեց կռվում շատ ահավոր,
Ողջ աշխարհի մարդկությունը
Գոհ ընդունեց պարտությունը
Հայոց ազգի մեր զորավոր:

Նեղանում ենք, որ այդ հուժկու
Թշնամին մեր շատ ահարկու,
Երբ չի հաղթում հայոց բազկին,
Խաբելով է տիրում ազգին՝
Դեմ հանելով մեկը մեկին:

Իսկ այդ պահին նեղանում են

Ճամփաներն իմ հայրենիքի,
Գյուղերը մեր դատարկվում են,
Սահմաններին մեր Սյունիքի
Թուրքն է առանց իրավունքի:

Նեղանում ենք մենք մեզանից,
Մեր թվացյալ ղեկավարից:
Մեղադրում ենք մենք տեր աստծուն՝
Մեր փոխարեն նա այս կյանքում
Մեր հողի մեջ մեզ չի փրկում:

Բա ի՞նչ անենք, բա ո՞նց անենք,
Նեղանալը մեզնից վանենք՝

Քաջ Միերին մեր նեղացած

Ժայռից հանենք ու կռիվ տանք,

Կամ ազգովի մենք ժայռ դարձած

Ու նեղացած հավերժ մնանք:

ՈՒՇԱՑԱԾ ԿՏԱԿ

Հայրը մեր պատռեց երկնքի քողը,
Ու տեսանք վերից իր դեմքի շողը,
Ուզեցինք փարվել մենք կարոտագին
Մեր խրոխտ, բարի հայրիկին անգին:

Բայց նա մռայլ էր ու խիստ զայրացած,
Ձգված էր դեմքը, մի քիչ քարացած:
Ձայնեց նա վերից.« Ինչու՞ պիտի գամ,
Կտակ եմ թողել, չե՛ք բացել անգամ»:

«Հայ՛ր»,- մրմնջացինք,-«պետք չէ մեզ ոչինչ,
Գոհ ենք մեր կյանքից, ունենք ամեն ինչ»,-
Ցոլաց երկինքը, կեղծավոր քամին

Գցեց կտակը մեր դռան շեմին:

Երկյուղով վերցրի փաթեթը գրված,
Բացեցի ես այն, ինչ ինձ էր տրված:
«Խի՞ղճ, ինչիս է պետք՝ շատ ունեմ արդեն,
Հա՛յր, խղճա դու ինձ, ետ վերցրու նորեն»:

Քույրս՝ ավագը, պահվածքով համեստ,
Թուղթը բացեց իր. «Խոսելու արվե՞ստ,
Բայց, հա՛յր իմ բարի, ես միշտ եմ արդար,
Մտքի թռիչքով, լեզվով իմ ճարտար»:

Փոքր քույրիկիս հասավ բարություն:
«Ոչ մեկի հանդեպ չունեմ չարություն»,-

Ասաց ու թուղթը տվեց եղբորը,
Այդ պահին նորից կորցրինք մեր հորը:

Երկինքը փակվեց, քամին այդ չնչին
Բացեց իմ եղբոր փաթեթը վերջին:
Մի գիրք կար այնտեղ մեր հորից գրված՝
«Հազարան Բլբուլ» պոեմը սիրված:

Ամպերի խորքից լսվեցին նորից
Նախատինքները մեր բարի հորից.
-Հերի՛ք դուք ապրեք միայն ձեզ համար,
Մեր ազգը ունի ցավեր անհամար:

Ու թե խիղճ ունես՝ խղճա ամենքին,

Ովքեր չեն տեսնում իրենց մեջ չարքին:
Մի՛ դատիր մտքով կուրության համար,
Ցո՛ւյց տուր ճամփաներ անհուն, անհամար:

Ունես բարությո՞ւն, ճի՛շտ օգտագործիր,
Մի արդարացրու մի ոճրագործի,
Որ նախընտրելով ոսկին ու փողը
Արյունով ներկեց հայրենի հողը:

Իսկ թե ազնիվ ես, խոսքի մեջ՝ ճարտար,
Անտարբեր լինելն ինչո՞վ է արդար:
Ինչու՞ ես լռում, երբ դևը ներքին
Կեղծում է, ստում, պառակտում ազգին:

Զավակնե՛ր իմ քաջ ու հա՛յ ժողովուրդ,

«Հազարան Բլբուլն» ունի ճիշտ խորհուրդ՝

Կտրե՛ք գլուխը մեր ներքին դևի

Ու ողջ հայ ազգը կհարատևի:

ՄԱՅՐԻԿԻՍ

Ես լսեցի հառաչանքդ,
Աստծուն արված աղաչանքդ,
Օվկիանոսի հեռու ափից
Քեզ կորցնելու մեծ սարսափից,
Քամու թևով, լուսնի շողով
Թռա մոտդ սրտի դողով,
Ի՛մ աննման, սիրու՛ն մայրիկ:

Բայց գոցված են քո աչքերը
Ու սառչում են քո ոտքերը,
Տե՛ր իմ աստված, այս ի՞նչ պահ է,
Բարի՛ հրեշտակ, մի՞թե մահ է:
Վա՛յ, արցունք կա աչքիդ փոսում,

Իսկ մյուսները ներս են հոսում:

Ա՛խ, իմ սրտի՛կ, անո՛ւշ մայրիկ:

Ու այդ բյուրեղ արցունքի մեջ

Կան կարոտի խոսքեր անվերջ,

Քնքշաբարո ժպիտներ կան,

Մեր կյանքն անցած, նաև՝ ներկան:

Քո փոխարեն, տես այսուհետ,

Այդ արցունքն է խոսում ինձ հետ,

Իմ հարազա՛տ, անգի՛ն մայրիկ:

Ու ցոլալով գույներ պես-պես

Նա պատգամ է թողնում կարծես.

«Տարե՛ք, տարե՛ք ինձ Հայաստան,

Դուռը բաց եմ թողել մեր տան,

Գուցե ետ գաք ու երևի

Կյանքը սկսեք դուք նորովի»:

ՔՈ ԽԻՂՃԸ

Խիղճը, որ ծնվեց քեզ հետ միասին,
«Նա է քո աստված»,- բոլորը ասին,-
«Բացելով դուռը հոգուդ դարպասի,
Թաքնված քեզնից նա քեզ կսպասի»:

Ճիշտը չգիտի դեռ ոչ ոք սակայն,
Նաև պահապան հրեշտակն է քո այն՝
Փորձանքից նույնիսկ դու մի կերպ փրկված
Կկարծես օգնեց երկնային աստված:

Գոյությունը իր շուտով դու կզգաս,
Թե որ դեմ գնաս, տես որ չսգաս՝
Ձղջանքի բոցե լեզուներն անշեջ

Հոգուդ դժոխքում քեզ կայրեն անվերջ:

Բայց թե դու ներքին ձայնիդ հավատաս,
Վստահես խղճիդ, հոգիդ իրեն տաս՝
Նա քո միջոցով, քեզ հետ համատեղ
Կօգնի տկարին այստեղ ու այնտեղ:

Իսկ թե լույս վառվի ոսկեղեն փառքի
Սատանան խիղճդ դնի վաճառքի,
Վառի՛ր մոմերդ խղճով քո բարի,
Թող ոսկին նրանց լույսից խավարի:

Հրեշտակ-խիղճ-աստված միասնությունը,

Հիշի՛ր, դա է միշտ քո փրկությունը:

Քայլես թե վազես, քնես թե ելնես,

Դու միշտ էլ նրա ձայնը կլսես.

«Ես եմ քո խիղճը ու նաև աստված,

Պահապան հրեշտակ վերևից տրված

Ու, երբ որ հասնի պահդ վերջնական,

Քո փոխարեն ես կտամ պատասխան»:



ԴՐԱԽՏԻ ՃԱՄՓԱՆ

Դու կյանքի անցո՛րդ, լսիր մի խորհուրդ՝
Շատ մահեր կգան, կթակեն դուռդ,
Եվ չեն էլ հարցնի ոչ թույլտվություն,
Ոչ տարիք, ոչ սեռ, ոչ էլ ազգություն:

Փակ պահիր դուռդ, թող որ չքանան,
Բայց թե երկյուղես նույնիսկ մեկ վայրկյան,
Նրանք կգտնեն ներս գալու ճամփան
Ու կյանքդ կապրես չապրելու նման:

Իսկ թե աստծու հետ կապել ես պայման՝
Նրանից խնդրել դրախտի ճամփան,
Դու պիտի սպասես այն միակ մահին,

Որ որոշվել է քո ծնված պահին:

Անսաս թե խոսքին, որ տրվեց վերից՝
Կյանքից առավել, մաքրությամբ անբիծ
Պիտի պաշտես այդ անտեսանելին,
Նա է դրախտի միակ բանալին:

ԵՎ երբ դու դառնաս իր սիրուն արժան,
Ու փաթաթվի քեզ մի օր նա դաժան,
Մի վախեցիր դու, այլ՝ սիրիր նրան,
Սիրուց է ծնվում դրախտի ճամփան:

ՄԻԱԿ ԼԵԶՈՒՆ

Ասում են մարդիկ ինչ-որ ժամանակ
Կառուցում էին հզոր աշտարակ,
Մեկ լեզվով խոսում, իրար հասկանում,
Ձգտում էին պարզել կյանքն իրականում:

Քիթները խոթում աստծո գործերում,
Հետո փոշմանում, խնդրում էին ներում,
Իսկ աշտարակն էլ այդ Բաբելոնյան
Վեր էր խոյանում վայրկյան առ վայրկյան:

Մարդու ձգտումը՝ աստծուն հասնելու,
Նոր գաղափարով հոգին սնելու,
Ինչ արած, ցավոք, աստծուն դուր չեկավ
Ու ջարդեց, փշրեց ինչ ձեռքը ընկավ:

Աշտարակի հետ, էլ ի՞նչ էիք ուզում,
Փշրվեց նաև ընդհանուր լեզուն:
Հուսահատ մարդիկ ինչ էլ որ անում,
Խոսքի քաոսից գլուխ չէին հանում:

Մի կյանքը քիչ էր, որ դիմանային,
Հազար լեզուներ ո՞նց իմանային:
Ամբոջ աշխարհում լուծում կար միակ՝
Մեկ լեզվով խոսել պարզ ու հասարակ:

ԵՎ գտան մարդիկ այդ լեզուն միակ,
Տիրապետելով խոսքերին արագ՝
Փամփուշտի լեզուն և ուժի լեզուն,
Մի՞թե, աստվա՛ծ իմ, դու սա՛ էիր ուզում:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ

ՇԵՄԻՆ

ՊԱՏՄՎԱԾՔ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՄԻՆ

Կանգնած էր ծերունին գլխահակ, լուռ ու կարծես մի փոքր շփոթված: Նրա ծնկները դողում էին չոր ու փխրուն ոսկորների ծանրությունից, ուսերն ու մեջքը կորացած էին տարիների բեռից: Փորձում էր հիշել կարևոր, շատ կարևոր ինչ-որ բան, որ դեռ չէր հասցրել ավարտել, բայց հիշողությունը կարծես վերածված լիներ ինչ-որ երկնագույն էկրանի, որտեղ ցուցադրվում էր իր կյանքի տարբեր դրվագներ, բայց չգիտես ինչու այնտեղ չկային իր սիրված պահերը կամ սիրված մարդիկ: Նա արդեն հասցրել էր ընկերներին ու հարազատներին այնքան կարոտել, որ պատրաստ էր նույնիսկ դժոխքի դարպասներով անցնել, միայն թե մեկ անգամ ևս տեսներ նրանց: Շատ Երկար ջանքեր չպահանջվեցին նրանից հասկանալու համար, որ կանգնած էր աստծո դատաստանի առջև, որտեղից ամեն ակնթարթ լսվում էր դժոխքի, գուցեև դրախտի դարպասների բացվելու և փակվելու ճռռոցը:

- Ինչո՞ւ դժոխք, ո՞րն է իմ մեղքը,- լռությունն ընդհատելով բարբաջեց նա մի տեսակ կցկտուր ու հուզված ձայնով, - Ես միշտ ազնիվ եմ եղել և

չեմ հանդուրժել ոչ մի բռնություն կամ էլ օրինազանցություն:

- Դու մեղավոր ես, որովհետև հայ ես,- մետաղի զրնգոցի նմանվող ձայնը այնքան ուժգին հնչեց կարծես բարձրախոսն իր ականջի մեջ տեղավորած լինեին:

- Ի՞նչ, միայն այդքա՞նը, - խոնարհած գլուխը բարձրացնելով նա փորձեց նայել ուղիղ դիմացինի աչքերի մեջ ավելի լավ հասկանալու, թե ինչ էր կատարվում, սակայն, շլացուցիչ լույսից բացի ոչինչ չտեսնելով ամուր փակեց աչքերը:

- Դրանում ավելի շատ քո նախնիներն են մեղավոր, որովհետև նրանք էլ հայ են եղել, - շարունակեց սարսափազդու ձայնը,- և նույնիսկ նրանց ու նրանց նախնիները: Սա խմբակային հանցագործություն է:

-Բայց, - խեղճացած կմկմաց մեղադրյալը,- ախր, աստծո դատարանն իմ իմացած ամենաարդար դատարանն է՝ միակ արդար դատարանն ամբողջ աշխարհում, ավելի ճիշտ՝ տիեզերքում:

- Լռի՛ր, - բղավեց ձայնը, - դու հանդգնել ես նույնիսկ շարունակություն թողնել:

Մեղադրյալ ծերունին, որն իր ողջ կյանքում սովոր էր ամեն ինչում մեղադրել միայն ինքն իրեն, առաջին անգամ քաջություն ունեցավ հակադրվելու և մեղադրելու դիմացինին.

-Դուք շատ անարդար եք վարվում հայերի հանդեպ,- իր իսկ ասած այդ խոսքերը կարծես ուժ տվեցին իրեն ու նա սառած քրտինքը ճակատից մաքրելով հպարտորեն ժպտաց:

- Իսկ արդա՞ր ես համարում արդյոք, որ դժոխքի դարպասի փակման և բացման մենաշնորհն աստծո փոխարեն անցնի սատանայի տնօրինությանը, - այդ մետաղյա տարօրինակ ձայնն ուղղակի ապտակի նման շրխկաց ժպտացող ծերունու դեմքին:

Դեռ ոչ ոք չէր ժպտացել դժոխք մտնելուց առաջ: Մի պահ լռությունից հետո մեղադրող կողմը շարունակեց.

-Դժոխքի դարպասը միակ բանն է, որ կառուցեցի ոչ միայն երկնային, այլ նաև երկրային օրենքներով: Այն բացելու ու փակելու համար էլեկտրականություն է պետք: Մենք մարդկանց տալիս ենք նավթի նորանոր պաշարների քարտեզներ ու դրանց դիմաց վերցնում

էլեկտրոէներգիա ստանալու նրանց վերջին գյուտերը: Եթե այլևս չփակվեն դժոխքի դռները, սատանան խաբելով իր տված խաղաղության խոստումներով՝ մարդկությանը ողջ-ողջ դժոխք կնետի ու նույնիսկ ամբողջ երկրագունդն էլ կայրի դժոխքի կրակների մեջ: Խեղճ, միամիտ մարդիկ այդպես էլ երբեք չեն հասկանա, որ սատանայի հետ խաղաղության պայմանագիր կնքողները դժոխքի անցագիր են ստանում նույնիսկ իրենց կենդանության օրոք:

- Բայց... Հայը... ի՞նչ կապ ունի,- հուսահատված ձայնով կմկմաց ծերունին և այդ նույն պահին էլ վեր թռավ դիմացինի անսպասելի բարձր բացականչությունից.

- Դուք՝ հայերդ, անընդհատ նկատում եք անարդարությունն ու միայն քթի տակ մրթմրթում, ոտքի տակ եք ընկնում, բոլորին սպառնում եք դժոխքի դարպասներով: Ձեզ որ մնա, աստծուն էլ դժոխք կուղարկեք:

Խեղճացած ու շփոթված ծերունին իր իսկ անզորությունից և հուսահատությունից ելք

էր փորձում գտնել: Նա անգամ չէր էլ մտածում իր հոգին դժոխքից փրկելու մասին: Նրան հուզում էր միայն մի բան՝ ինչպես փրկել իր ու իր հայրենակիցների սերունդներն այս ամենաարդար, բայց անարդար դատարանից:

- Ելքը մեկն է, - լսվեց ի պատասխան:

- Ի՞նչ, մի՞թե ես բարձրաձայն էի մտածում:

- Դե բա՛վ է, այդքան մանկամիտ մի՛ եղիր: Ձեր իսկ միամտությունն էլ հենց ոչնչացնում է ձեզ, - շարունակեց ձայնը, - Շատ կարճ ժամանակ եմ տալիս քեզ: Վերադարձի՛ր երկիր հաղորդելու ձեր միակ փրկության երաշխիքի մասին: Դո՛ւք, միայն դու՛ք կարող եք ստեղծել այնպիսի հզոր արհեստական բանականություն, որն ավելին կլինի քան ես: Այն կամ կկործանի ամեն ինչ, կամ իմ փոխարեն հենց ինքը կդատի մարդկանց, և նրանք կկանգնեն իմ դիմաց արդեն այդ բանականության կողմից տրված ուղեգրերով՝ դժոխք կամ դրախտ: Թե չէ ինչ է սա՝ գալիս են այստեղ ու քթի տակ անընդհատ խեղճացած մրթմրթում «արդարադատությո՛ւն, անարդարությո՛ւն»: Հոգնել եմ

ես մարդկանցից շա՛տ եմ հոգնել ...

Մի քանի ակնթարթ խորհրդավոր լռությունից հետո ծերունին հանկարծ հասկացավ, որ այդ գոռացող ձայնը հենց հավիտենական լռության ձայնն էր ու ամբողջ մարմնով փշաքաղվեց: Հարկավոր էր հեռանալ այդտեղից քանի դեռ դժոխքը կուլ չէր տվել իրեն, մանավանդ, որ թույլատրվեց երկիր վերադառնալ և շատ կարևոր տեղեկություններ փոխանցել մարդկության փրկության համար, բայց ո՞ր կողմ գնալ: Խեղճն այդպես էլ չիմանալով վերադարձի ճանապարհը մեխվել, մնացել էր դռների միջև: «Թեկուզ և անփորձանք տուն հասնեմ»,- մտածում էր նա,- «ո՞վ կհավատա աստծո կողմից տրված այս միակ փրկության երաշխիքի իրականությանը, եթե շատերը նույնիսկ աստծուն չեն հավատում»: Մինչ նա տարակուսանքով կողքերն էր նայում, ինչ-որ մի սպիտակ սատանայի աժդահա ձեռք իրեն երկնքից կարծես ներքև հրեց: «Ա՛յ քեզ բան, տեսնես ո՞վ էր ինձ հետ խոսում նոր»,- դեռ չէր ավարտել իր միտքը, երբ զգաց, որ ցած է գլորվում: Հասնելով ամպերին վայրէջքը մի պահ դանդաղեց, և նա հասցրեց հիանալ տեղ-տեղ զանազան իրերի նմանվող փոքրիկ ամպիկներով : Դրանք այնքան

նուրբ և փափուկ էին թվում, այնքան թափանցիկ, երկինքն էլ ողողված էր այնպիսի դրախտային մեղմ ու սքանչելի հնչյուններով, որ քիչ էր մնում, թե պառկեր առաջին իսկ պատահած ամպե անկողնում մի թեթև ննջելու:

Մայրամուտը դեռ չէր ավարտվել, իսկ մոտեցող գիշերը հագնելով աստղազարդ գիշերանոցը փորձում էր տարբեր ամպերով իր մերկությունը ծածկել մարդկանցից: Ամեն մի ամպ արագ փոխելով իր տեսքը ինչ-որ խորհրդավոր գաղտնիք էր պահում իր մեջ: Ա՛յ, այն մեկի ետևում իր մանկությունն էր թաքնվել և ամպե շղարշով փակվելով գաղտնի ուսումնասիրում էր իր ապագայի կնճռոտված դեմքը: Ծերունին համարում էր, որ ինքն ուրախ ու անհոգ մանկություն էր ունեցել, սակայն, չգիտես ինչու այստեղ՝ բարձր երկնքում, իր մանկությունն այնքան էլ երջանիկ չէր: Այն լալիս էր անձայն ամեն անգամ մի նոր կնճիռ հայտնաբերելով, իսկ մուգ, արդեն մթնած երկինքը լուռ ձայնակցում էր նրան բարակ ու տաք անձրև մաղելով:

Շուտով ծերունուն սկսեց դուր գալ ճերմակ ամպերի միջով ներքև գահավիժելը: Վերջապես կատարվել էր իր մանկության ամենաբաղձալի

երազանքը՝ թևեր ունենալ ու արծվի պես ճախրել երկնքում: Նա արագ սլացավ ցած, սլացավ մինչև ... ընկնելով անկողնուց բացեց աչքերը.

- Աստվա՛ծ իմ, մի՞թե սա երազ էր,- վերև նայելով բացականչեց նա,- բայց ես կպատմեմ այն ու կփոխանցեմ փրկության երաշխիքը բոլորին, չէ՞ որ աստված երազներով է խոսում մարդկանց հետ: Ծերունու ականջերում շարունակվում էին հնչել երկնային դրախտի մեղմ հնչյունները: Նա մի քանի ապարդյուն ջանքեր գործադրեց հատակից վեր կենալու, բայց տեսնելով անմեղ մանկան պես հանդարտ քնած շնիկին իր կողքին, որոշեց չշարժվել, որ քնից նրան չարթնացնի: Զարմանալի էր, թե ինչպես իր մահճակալից վայր ընկնելու աղմուկից շնիկը դեռ չէր արթնացել: Այդ պահին ասես երկնքից լսվեց նույն ձայնը.

- Ա՛յ մանկամիտ հայ, իրականում քո այդ փրկության երաշխիքի մասին երազը չարքից էր, «բանականությու՛ն», այն էլ «արհեստակա՛ն»: Դժվա՞ր է արդյոք կյանքը վայելել իր բնական ու անարատ մաքրությամբ: Հիշի՛ր «արհեստական» ամեն ինչ անշուշտ սատանայից է՝ արհեստական սնունդ,

արհեստական ժպիտներ, նույնիսկ արհեստական բանականություն, թվարկի՛ր ինչքան ուզում ես: Ամենուր սատանան է գործում կործանելու իմ ստեղծած ողջ բնական ու բանական հրաշքները՝ բնությունն ու մարդկանց: Այդ պահին ճերմակ, բրդոտ մարմնով ու ճերմակ պոզերով մի պստիկ սատանայի ճուտ հայնտվեց օդի մեջ ու ակնթարթորեն անհետացավ հասցնելով բացականչել.

- Իսկ արհեստական շնչառությո՞ւնը:

--Իսկ դու լռի՛ր, երբ մեծերն են խոսում,-նրա վրա բղավեց ձայնը, - Այդտեղ ոչ մի արհեստական բան չկա՝ մի մարդ իր բնական շնչառությամբ օգնում է վերականգնել մյուս մարդու բնական շնչառությունը,- ձայնը խորը շունչ քաշեց ու շարունակեց, - և լավ իմացե՛ք, ամեն ինչի բնականն է նախընտրելի, նույնիսկ մահվան: Ուզո՞ւմ եք մարդկությունը փրկվի կործանումից , հրաժարվե՛ք արհեստական ամեն ինչից, հակառակ դեպքում՝ հայտնվելով իմ դիմաց այլևս չպնդեք, որ շատ ճիշտ եք ապրել և արդարադատության շեմին էլ արդարություն չկա:

Հանկարծ ձայնը կարծես մի փոքր խռպոտվեց

ու անսպասելի զայրացած սկսեց գոռալ, իսկ հազարավոր ձայներ դժոխքից միացան նրան.

- Դա՛- դա՛- ռե՛ց- ռե՛ք արհեստական բանականության զարգացումը, դա՛- դա՛- ռե՛ց- ռե՛ք:

Մահճակալից ցած ընկած ու այս անգամ արդեն հատակին քնած ծերունին վեր թռավ, տրորեց աչքերն ու զարմացած նայեց շուրջը: Ինքն արդեն արթուն էր ու սենյակում ոչ ոք չկար, բացի իր շնիկից, սակայն իր երազում գոռացող նույն այդ ձայները դեռ շարունակում էին հնչել նաև իրական կյանքում: Նայեց նա աղմուկի ուղղությամբ: Ախ հա՛, հեռուստացույցն էր՝ մոռացել էր անջատել այն: Հեռուստացույցի էկրանը, կարծես թե ջարդուփշուր էր լինում փողոց դուրս եկած ու աշխատանքները կորցրած ցուցարարների հզոր աղաղակներից.

- Դա՛- դա՛- ռե՛ց- ռե՛ք արհեստական բանականության զարգացումը, դա՛- դա՛- ռե՛ց- ռե՛ք:

Ծերունին շփոթված նայեց շուրջը,

- Բա հիմա ես ի՞նչ անեմ:

ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ՀԵՂԻՆԱԿԻ

Իմ սիրելի՛ ընթերցող,

Եկ այսուհետ մենք աղոթենք միասին՝
Ու էլ չասենք աղոթքի մեջ խոսքեր սին,
Վտանգավոր բառեր են շատ՝ բառը «չար»,
«Փորձություն»-ը ու նաև «մի»-ն՝ երկու տառ:
Եկ աղոթենք հայերենով առօրյա
Տերունական մեր աղոթքը այսօրվա,
Խոսքը ուժ է աղոթքի մեջ զորավոր,
Տե՛ր իմ, փրկի՛ր դու մեր հոգին մեղավոր:

Հա՛յր մեր, որ երկնքում ես,
Սուրբ թող լինի քո անունը,
Քո թագավորությունը թող գա,
Քո կամքը թող լինի երկրի վրա,
Ինչպես որ երկնքում է,
Տուր մեզ ամենօրյա հացը
Եվ թող մեր պարտքերը,
Ինչպես որ մենք ենք թողում մեր պարտապաններին
Եվ տար մեզ փրկության ու բարու ճանապարհով,
Որովհետև քոնն է թագավորությունը, զորությունը,
Եվ փառքը՝ հավիտյանս հավիտենից ***ԱՄԵՆ***